09.11.23 - 09.11.23
08:15
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ

Ս.թ. նոյեմբերի 9-ին՝ ժամը 8:15-17:00-ն, Իջևանում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ ուսանողների համար կիրականացվի կ արիերայի խթանման ծրագիր, որի շրջանակում կենտրոնի աշխատակիցները ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողներին կներկայացնեն կենտրոնի գործունեությունը։

Կենտրոնի փոխտնօրենը և աշխատակիցները կանցկացնեն «Ինչպե՞ս գտնել հենց քո երազած աշխատանքը», «Ինչպե՞ս ներկայանալ գործատուին», «Գրագետ CV կազմելու կանոնները» թեմաներով դասընթացներ։

Հանդիպմանը իրենց կազմակերպություններում առկա աշխատանքի հնարավորությունները կներկայացնեն նաև «The Gurus» և «Արմենիա Ինշուրանս» ընկերությունների ներկայացուցիչները։

Օրվա ընթացքում նախատեսվում է շրջայց Իջևանի գինու-կոնյակի գործարան, որի շրջանակում ուսանողները կստանան ինչպես մասնագիտական որոշ գիտելիքներ, այնպես էլ կծանոթանան իրենց տարածաշրջանում առկա աշխատանքի հնարավորություններին։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am